

կան,, եւայն: Տիշդ ասանկ վրիպակ ունեցող ընթերցուածով եղած է ան հայ բնագիրը՝ որմէ Մխիթարայ կաթողիկոսի ատեն լատին թարգմանութիւն մ'եղած է. Credit in his sola universalis et apostolica Ecclesia.

16. Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի քառութիւն եւ ի թողութիւն մեղաց:

Ասանկ է հասարակ ընթերցուածը. բայց բնագիրը կ'ըսէ “Ի մկրտութիւն ապաշխարութեան եւ թողութեան մեղաց,,: Յայտնի է որ ἀφεσως բառը քստոտթեան եւ թորոթեան թարգմանելը բնագրէն հեռանալ չէ. ինչոքը մնացած տարբերութեան վրայ է: Տիշդ աս հասարակ տպագրութեանց ընթերցուածին համեմատ զրչագիրներ պակաս չեն, նոյն իսկ Ներսիսի Շինողի եւ Ղամբրոնացւոյն օրինակները (եթէ կրնայ տպագրողաց կամ ընդօրինակողաց յայտմ. վստահուիլ) հարազատ ընթերցուածոյն չեն նպաստեր: Աս հարազատ ընթերցուածը պիտ'որ ըլլայ, յունականին համեմատ, նախ՝ “Ի մի մկրտութիւն ապաշխարութեան,,: Իրօք սրբոյն Ղազարու մատենագարանին (Ժմգրք. ԽԲ.) երկաթագիր մատենին մէջ առ աջին ձեռամբ գրուած է ի մի մկրտութիւն ապաշխարութեան, ետքէն երկրորդ ձեռօք՝ ապաշխարութեան բառէն շինուած է յապաշխարութիւն: Նաեւ Սոյ ժողովոյն հայերէն օրինակն ալ ըստ այսմ էր՝ համեմատ յունականին. վասն զի լատին թարգմանութեան մէջ կը կարգանք. In unum baptismata poenitentiae. Սոյն ձեւը, ստուգիւմեր հանդանակէն առնուելով, կը գտնուի նաեւ ան յորդորակին մէջ որն որ կայ Մաշտոցաց մէջ, եւ երբեմն կը տեսնուի ի վերջ կոյս Աննապարոյ սա վերնագրի տակ. “Առջումն ապաշխարութեան,,:

Ան գրչագիրք՝ որոնց մէջ կը կարգացուի. “Ի մի մկրտութիւն ապաշխարութիւն,, որն որ անշուշտ խմատ մը չունի, սակայն ցոյց մըն է թէ ինչպէս հին ձեւը քակուելով՝ մեղմով նոր ձեւոյն սկիզբ եղած է նախդիր մ'աւելցրնելով. “Ի մի մկրտութիւն, յապաշխարութիւն,,: Աւելցի քով Արուստղեմացի հանդանակը կ'ըսէ. “Ի մկրտութեան ապաշխարութեան ի թողութիւն մեղաց,,: Գլխաւորաւ կրնայ ըլլալ որ հայ բնագիրն՝ ինչպէս նաեւ յոյնը, սկզբնաբար անանկ եղած չըլլայ յայտմ. մասին, ինչպէս Ալեքսի իրենին մէջ կը կարդայ. սակայն անցմամբ ժամանակաց ան ամբողջ ասութիւնը կէտելով (գոնէ հայերէնի մէջ) երեք կտոր եղաւ, այս ինքն “Ի մկրտութիւն, յապաշխարութիւն, ի թողութիւն մեղաց,,. նոյն իսկ “եւ,, շարկապին պակսիլը երկրորդ եւ երրորդ անգամին մէջ՝ ըսածնէն ետեւ աւելի եւս հաստատութիւն տալ կ'երեւայ: